

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում
հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների
վերազինման աշխատանքների /ջրագծի կառուցում/

<<ՀԵՐՏ>> ՍՊԸ տնօրեն

Հ. Հակոբյան

Կատարող՝ <<Յուլի Դալի>> ՍՊԸ տնօրեն

Լ. Փաշինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.2	Հապավումներ	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր	7
1.4.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը	10
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	16
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	16
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ	17
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա	19
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	21
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ 7	
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՅՆՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ՝	51
4	4, ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ	54
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄԵՂՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	55
6.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	66
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	74
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	76

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	Հ. Պետրոսյան
1.3 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ ք. Երևան, Նոյ թաղամաս, 119
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղ

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԱԶ՝ Անհատ Ձեռնարկատեր

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է վերազինել /ջրագծի կառուցում/ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրը և մենատնային քոթեջները:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների վերազինման /ջրագծի կառուցում/ աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. ՀՀ անտառային օրենսգիրք

17. ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի N1404-Ն որոշումը:

18. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների>> օրենքը,

19. ՀՀ կառավարության 2014թ հուլիսի 31-ի 781-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2010թ 71-Ն որոշում,

21. ՀՀ կառավարության 2010թ 72-Ն որոշում,

22. ՀՀ կառավարության 14.08.2009թ 967-Ն որոշում,

23. ՀՀ կառավարության 08.02.2018թ 108-Ն որոշումը:

24. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը 23,11,1999թ,

25. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը 03,04,2000թ:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է պատվիրատու Հ. Հակոբյանի պատվերի, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հ.հ 18032021-06-0046, 18032021-06-0047, 18032021-06-0051, 1803202-106-0056 վկայականների՝ տրված 2021թ մարտի 18-ին, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների կառուցման նախատեսվող գործունեությունը անցել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և 21.07.2021թ ստացել է դրական ԲՓ 0131-21 եզրակացություն:

Համաձայն տրված եզրակացության, տրամադրումից հետո, տարածքը պարիսպապատվել է, անցկացվել է շուրջ 2.3կիլոմետր գազատար, անցկացվել է շուրջ 1.7կմ երկարության 10000կվա հզորությամբ էլ. սնուցման գիծ: Տեղադրվել և շահագործման է հանձնվել 630կվա հզորությամբ ենթակայան: Այս պահին կատարվում է 11 առանձնատների կառուցման աշխատանք:

Նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների վերագինման աշխատանքների /ջրագծի կառուցում/, կառուցել խմելու-կենցաղային ջրագիծ՝ Փ90 պոլիէթիլային խողովակներով՝ ստորգետնյա եղանակով: Ջրագիծն անցնելու է համայնքային սեփականություն հանդիսացող և անտառային հողատեսքերով: Ջրագծի երկարությունը կազմում է 2407,58մ, ընդհանուր քանդման մակերեսը կկազմի 1203,79խմ, որից անտառային հողերով անցնող մասի երկարությունը 1560մ, այն անցնում է ճանապարհի երկայնքով:

Ժամանակավոր ճանապարհների կառուցում նախատեսված չէ, օգտագործվելու է առկա գոյություն ունեցող անտառմիջյան ճանապարհները:

Ջրագիծը սկիզբ է առնելու <<անանուն>> աղբյուրից, որը գտնվում է Գյուլագարակ գյուղից

հարավ, ձորակի հունի հետևյալ կոորդինատներում՝ $X=40^{\circ} 55' 11.1''$ $Y= 44^{\circ} 28' 40.6''$ 1584մ բարձրության վրա:

Կառուցվող տեղամասում անհրաժեշտ է խրամուղու 3-4-րդ կարգի գրունտների փորում, ավազով նախաշերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, բնահողի հետլիցք տոփանումով: Աղբյուրի վրա նախատեսվում է կառուցել կապտաժ, թաց և չոր հորերով:

Նախատեսվում է դատարկման հորերի ու օդահան հորերի կառուցում, Մարիչ հորի կառուցում:

Ստորև ներկայացվում է Ջրագծի ուղեծիրը բեկվող կետերի համարակալմամբ՝



Ջրագծի կոորդինատները՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով,

1	4531866.44	8456032.81	54.62
2	4531910.16	8456000.07	40.96
3	4531947.04	8455982.26	20.18
4	4531963.43	8455970.49	92.28
5	4532051.80	8455943.91	44956
6	4532081.77	8455942.42	45164

7	4532102.96	8455927.21	12328
8	4532113.28	8455927.65	15888
9	4532120.69	8455927.05	13697
10	4532128.04	8455926.63	31.69
11	4532159.68	8455924.84	13.47
12	4532173.13	8455924.09	15.73
13	4532187.02	8455916.71	41760
14	4532191.56	8455914.29	15.71
15	4532200.89	8455901.65	35.60
16	4532235.88	8455895.04	22068
17	4532242.36	8455893.82	22.74
18	4532264.26	8455887.67	15.25
19	4532277.72	8455880.50	28369
20	4532286.37	8455875.96	19.83
21	4532303.93	8455866.74	22.43
22	4532325.44	8455860.36	20972
23	4532331.32	8455857.43	46.37
24	4532376.62	8455847.51	30.92
25	4532406.72	8455840.42	34274
26	4532417.09	8455834.53	29.20
27	4532445.17	8455826.54	42.45
28	4532486.75	8455817.93	29190
29	4532498.99	8455814.25	45275
30	4532511.88	8455806.35	101.52
31	4532597.35	8455751.56	44835
32	4532605.55	8455745.46	13.54
33	4532615.13	8455735.89	37.38
34	4532638.53	8455706.74	22.15
35	4532657.89	8455695.98	51.33
36	4532708.38	8455686.69	28.40
37	4532733.88	8455674.18	31.71
38	4532757.27	8455652.77	15.55
39	4532762.40	8455638.09	13.19
40	4532762.23	8455624.90	14.45
41	4532762.04	8455610.45	18.18
42	4532763.08	8455592.31	46143
43	4532764.47	8455587.23	13547
44	4532765.09	8455584.95	28672
45	4532772.11	8455581.59	24716
46	4532780.82	8455577.41	45171
47	4532782.91	8455577.47	12966
48	4532790.25	8455577.67	16681
49	4532799.70	8455577.94	23102
50	4532804.32	8455578.06	47.10
51	4532851.40	8455579.38	30.29
52	4532879.50	8455568.05	25.18
53	4532904.06	8455562.52	28.62
54	4532930.97	8455552.77	34669

55	4532943.13	8455548.36	35.08
56	4532976.11	8455536.41	74.41
57	4533048.80	8455520.54	54.34
58	4533100.62	8455504.16	46.50
59	4533146.72	8455498.13	33.48
60	4533179.57	8455491.68	34943
61	4533189.47	8455490.70	44963
62	4533195.46	8455490.10	44966
63	4533204.44	8455489.21	26.20
64	4533230.35	8455485.33	61.55
65	4533290.35	8455471.66	71.07
66	4533360.81	8455462.42	22.76
67	4533383.38	8455459.46	27.41
68	4533410.68	8455456.95	39.93
69	4533450.60	8455458.00	45.60
70	4533495.65	8455465.04	141.72
71	4533636.70	8455451.24	20.17
72	4533656.86	8455450.63	26.38
73	4533682.14	8455458.17	45087
74	4533692.06	8455459.83	44942
75	4533704.85	8455450.21	14.30
76	4533712.24	8455437.97	56.31
77	4533741.45	8455389.83	36.10
78	4533756.11	8455356.84	47.44
79	4533767.38	8455310.75	59.27
80	4533806.17	8455265.94	15.21
81	4533814.39	8455253.14	15.81
82	4533821.78	8455239.16	73.32
83	4533838.56	8455167.78	63.37
84	4533857.95	8455107.45	0

Տեղադրվող բոլոր սարքավորումներն ու ձևավոր մասերը անհրաժեշտ է նախատեսել PN 10ձնշման դասին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի /որը կմշակվի ՇՄԱԳ գործընթացից հետո/՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված, տարածաշրջանին բնորոշ ծառերի և թփերի օգտագործմամբ: Օգտագործվելու է տարածքի առկա հողային ռեսուրսները, նոր բուսահող չի բերվելու:

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագծերի մշակման ընթացքում ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան նախատեսվելու են անհրաժեշտ

միջոցառումներ:

Սույն նախագծում բոլոր տեխնիկական միջոցառումները մշակված են ՀՀ տարածքում գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերին համապատասխան:


Ստորև ներկայացվում է իրադրային հատակագիծը





Ստորև ներկայացվում է գլխավոր հատակագիծը՝ կոորդինատներով

**< Զերտ> ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի, Գյուլաքարակ համայնքի Գարգառ գյուղում
 հյուրանոցային համալիրի և մենսատնային քոթեջների վերազինման
 աշխատանքների / ջրագծի կառուցում/ գլխավոր հատակագիծ
 Մ 1:5000**

Կոորդինատային համակարգ՝ ARM WGS 84







Տարածքը գրունտային ճանապարհով միացված է միջհամայնքային ասֆալտապատ ճանապարհին: Գրունտային ճանապարհի երկարությունը մինչև ներկայացվող հողամաս կազմում է 700 մ:

Հողամասի արևելյան և հարավային կողմերից 50 –60 մ հեռավորության վրա ձգվում են անտառաշերտեր, իսկ դեպի հարավ-արևելք՝ 750 – 1000 մ հեռավորության վրա գտնվում է «Գյուլագարակ» պետական արգելավայրը:

Գարգառ գյուղի մոտակա բնակելի տներից հողամասը գտնվում է 2.2 կմ հեռավորության վրա, Գյուլագարակ գյուղից՝ 1.9 կմ:

Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Նախատեսվող համալիրը բաղկացած է լինելու /4 մեկ և երկու հարկանի առանձնատներից և 5 հարկանի հյուրանոցից: Համալիրում նաև նախատեսված են.

- Փոքր ֆուտբոլի դաշտ,
- Մեծ թենիսի կորտ,
- Զվարճանքնի կենտրոն
- Առևտրի սրահ:

Բոլոր ներքին ճանապարհները, ավտոկայանատեղիները և հարթակները ծածկված են լինելու գեոցանց – մանր խիճ համակարգով:

Տարածքի սահմանագատումը շրջակայքից լինելու է դեկորատիվ բնույթի՝ սյուներով և ժապավենով:

Ասֆալտապատ ճանապարհից դեպի հողամաս տանող գրունտային ճանապարհը երկու գծով սալապատվելու է տուֆի սալերով, արանքներն՝ խճով:

Նախատեսվում է ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում կառուցել խմելու-կենցաղային ջրագիծ՝ Փ90 պոլիէթիլային խողովակներով՝ ստորգետնյա եղանակով: Ջրագիծն անցնելու է համայնքային սեփականություն հանդիսացող և անտառային հողատեսքերով: Ջրագծի երկարությունը կազմում է 2407,58մ, որից պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերով անցնող մասի երկարությունը 1560մ, այն անցնում է ճանապարհի երկայնքով:

Ջրագիծը սկիզբ է առնելու <<անանուն>> աղբյուրից, որը գտնվում է Գյուլագարակ գյուղից հարավ, ձորակի հունի հետևյալ կոորդինատներում՝ X=40° 55'11.1" Y= 44° 28'40.6" 1584մ

բարձրության վրա:

Կառուցվող տեղամասում անհրաժեշտ է խրամուղու 3-4-րդ կարգի գրունտների փորում, ավազով նախաշերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, բնահողի հետլիցք տոփանումով: Աղբյուրի վրա նախատեսվում է կառուցել կապտած, թաց և չոր հորերով:

Նախատեսվում է դատարկման հորերի ու օդահան հորերի կառուցում, Մարիչ հորի կառուցում:

Ջրագծի կառուցումը տևելու է ընդամենը 10 օր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է /Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի)/ պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4, մոտ 18կգ /յուրաքանչյուր օր մոտ 2կգ /10x2=20կգ/:

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը աշխատողները կտեղափոխեն տարածքում առկա աղբամաններ:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma, \text{ж}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 14 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 10 օր

$$W_{\text{խ.տ.}} = (0.016 + 14 \times 0.025) \times 10 = 3.66 \text{ խմ/շին. ժամ.}:$$

- b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, մոտ 1447քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 10

$$U_1 = 1447 \times 0.0015 \times 10 = 21,705 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի / 21,705+3,66/ 25,365 խմ/շին. ժամ:

Կառուցվող ջրագծի ջրամատակարարումը՝ տեխնիկական ջուրը, իրականացվելու է ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

Խմելու ջուրը կլինի բերովի՝ տարաներով, հաշվի առնելով աշխատաօրերի

սակավ թիվը՝ 10օր:

Տեխնիկական ջուրը կտեղափոխվի կամազ մակնիշի ավտոմեքենայի վրա տեղադրված ավտոցիստեռնով:

Կանաչապատում և բարեկարգում

Գործունեության իրականացման արդյունքում ծառաթփային բուսականության հատում չի նախատեսվում, կենդանատեսակների բնադրավայրեր առկա չեն, քանի որ այժմ էլ տարածքում իրականացվում են շինարարական աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի /որը կմշակվի ԾՄԱԳ գործընթացից հետո/՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված, տարածաշրջանին բնորոշ ծառերի և թփերի օգտագործմամբ: Օգտագործվելու է տարածքի առկա հողային ռեսուրսները, նոր բուսահող չի բերվելու:

Ջրամատակարարման համակարգ

Նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների վերազինման աշխատանքների /ջրագծի կառուցում/, կառուցել խմելու-կենցաղային ջրագիծ՝ Փ90 պոլիէթիլային խողովակներով՝ ստորգետնյա եղանակով:

Ջրագիծը սկիզբ է առնելու <<անանուն>> աղբյուրից, որը գտնվում է Գյուլագարակ գյուղից հարավ, ձորակի հունի հետևյալ կոորդինատներում՝ $X=40^{\circ} 55' 11.1''$ $Y= 44^{\circ} 28' 40.6''$ 1584մ բարձրության վրա: Նախատեսվում է <<անանուն>> աղբյուրից օգտվելու համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ՀՀ օրենսդրությամբ ստանալ Ջրօգտագործման Թույլտվություն:

Կառուցվող տեղամասում անհրաժեշտ է խրամուղու 3-4-րդ կարգի գրունտների փորում, ավազով նախաշերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, բնահողի հետլիցք տոփանումով: Աղբյուրի վրա նախատեսվում է կառուցել կապտած, թաց և չոր հորերով:

Նախատեսվում է դատարկման հորերի ու օդահան հորերի կառուցում, Մարիչ հորի կառուցում:

Տեղադրվող բոլոր սարքավորումներն ու ձևավոր մասերը անհրաժեշտ է նախատեսել PN 10Ճնշման դասին համապատասխան:

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնտրությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետևի հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

- Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Նախատեսել անվտանգությունը և կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով և ցանկապատի երկայնքով տեղադրել լուսավորություն:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Կապտածի, քաջ ու չոր հորերի կառուցման
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ


ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՈՒ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

Դ/Դ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՅՄԱՆ ՄԻՈՒԹՈՐ	ՔԱՆԱԿ	ՔԱՇՇ ԿԳ
1	2	3	4	5
1	III ԿԱՐԳԻ ԳՐՈՒՆՏԻ ՄՇԱԿՈՒՄ ՉԵՌՔՈՎ ԿՈՂԱՑՄԱՍԲ	Մ ³	5.2	
2	IV ԿԱՐԳԻ ԳՐՈՒՆՏԻ ՄՇԱԿՈՒՄ ՉԵՌՔՈՎ ԿՈՂԱՑՄԱՍԲ	Մ ³	8.3	
3	ԽՃԻ ՆԱԽԱՇԵՐՏԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ 100 մմ ՀԱՍՏ ՏՈՓԱՆՈՒՄՈՎ	Մ ²	5.0	
4	ՉՐԱԴԱՎԱՔ ՊԱՏԻ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 6 ԲԵՏՈՆՈՎ	Մ ³	0.65	
5	ՉՐԱԴԱՎԱՔ ՊԱՏԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 6 ԲԵՏՈՆՈՎ	Մ ³	0.8	
6	ԽՈՂՈՎԱԿ Փ 76 X 3.0 L = 350մմ	ՀԱՏ	1.0	1.9
7	- 250 X 250 X 4	ՀԱՏ	1.0	2.0
8	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ՀԻՄԱՍՏԱԿԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 4 ԲԵՏՈՆՈՎ	Մ ³	0.7	
9	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 4 ԲԵՏՈՆՈՎ	Մ ³	2.05	
11	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԾԱԾԿԻ ԿԱՌՈՒԹՈՒՄ B-15 W 4 ԲԵՏՈՆՈՎ	Մ ³	0.34	
12	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԾԱԾԿԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՈՒՄ Փ10 AIII L = 1350մմ	ՀԱՏ	16	13.4
13	ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԾԱԾԿԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՈՒՄ Փ8 AI L = 2350մմ	ՀԱՏ	9.0	8.4
14	ՑԻՊԱՎԱՔ ՊԱՏԻ, ԹԱՅ ՈՒ ՉՈՐ ՀՈՐԵՐԻ ԱՐՑԱՔԻՆ ՄԱՍԻ ԲԻՑՈՒՄՊԱՏՈՒՄ	Մ ²	22	
15	ԲԱԴՐՈՒ ԴԵՏԻՑՔ	Մ ²	4.34	
16	ԱՎԵԼՈՐԻ ԲԱԴՐՈՒ ՓՈՐՈՄ ՏԵՂՈՒՄ	Մ ²	8.9	
17	ԿԱՎԵ ՓԱԿԱՆՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ H = 200մմ	Մ ²	0.35	
18	ԽՃԻ ՖԻԼՏՐՈՐԻ ՇԵՐՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ H = 200մմ	Մ ²	0.35	
19	ԿՈՊԻՃԻ ՖԻԼՏՐՈՐԻ ՇԵՐՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ H = 100մմ	Մ ²	0.7	
20	ՀՈՐԵ ԾԱԾԿՈՒՅԹ H = 150մմ	Մ ²	0.26	
21	ԹՍԲԱՊԱՏՄԱՆ ԱՄՐԱՑՈՒՄ 6ՍԲԱՊԱՏՈՒՄՈՎ H = 150մմ	Մ ²	0.26	


Դ/Դ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՅՄԱՆ ՄԻՈՒԹՈՐ	ՔԱՆԱԿ	ՔԱՇՇ ԿԳ
1	2	3	4	5
1	ՊԱՏԱՐԿԱՆ ԵՎ ԳԵՐԼՏՄԱՆ ԽՈՂՈՎԱԿ Փ50 L = 4.0 մ		1	16.0
2	ՀԱՍԱՐԱՐԻՉ ԿԱՑՈՒՅԻ ԱՎԵՏՈՒԿԱՅԻՆ ՀՐԵՐԻ ՀԵՌԱՅՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՖՈՒՄ Փ50	ԽԱՍԻ	1	
3	ՊՈՐՊԱՏԵ ԱՌԻՆԱԿ Փ100	ԽԱՍԻ	1	
4	ՊՈՐՊԱՏԵ ԱՌԻՆԱԿ Փ50	ԽԱՍԻ	1	
5	ՊՈՐՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՆՈՐ Փ108 L = 400մմ	ԽԱՍԻ	1	4.1
6	ՊՈՐՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՆՈՐ Փ50 L = 400մմ	ԽԱՍԻ	1	1.6
7	ՊՈՐՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՆՈՐ Փ50 L = 900մմ	ԽԱՍԻ	1	3.6
8	ՊՈՐՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՆՈՐ Փ50 L = 250մմ	ԽԱՍԻ	1	1.0
9	ԱՐՑՈՒՂՈՒՄ Փ50 / ՊԱՏԻ ՇԵՐՏԻ ԱՆՈՒՄ Փ 108 / 90	ԽԱՍԻ	2	1
10	ՊՈՐՊԱՏԵ ԽՈՂՈՎԱԿԱՆՈՐ Փ50 L = 500մմ	ԽԱՍԻ	1	2.0
11	ՄԵՏԱՐԿԱՆ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՅՈՐԱՆԵՐԿՈՒՄ 2 ԱՆՎԱՄ	մ ²	2.5	
12	ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԼԱՍՏՈՒՄ ՎԱՐԿԱՍԵՐԾՈՒՄՈՎ	մ	2.50	
13	ԽՈՂՈՎԱԿԻ ԼՈՐՍՈՒ ՀԱՍԱՎՈՐՈՒՄՈՒՆ ԼԵՐԿՈՒՄ ԲԵՏՈՒՄԻ ՄԱԾԻԿՈՎ Փ50 մմ	գ.մ.	4.0	
14	ՀԻՂՈՒՄԵԿՈՒՄԻՉ ՇԵՐՏ 2 ՇԵՐՏ ՈՒՐԵՐՈՅԻՉ ՏԱՔ ՄԱՍԻՎԱՅԻ ՎՐԱ	մ ²	11.5	
15	ՊՈՐՊԱՏԵ ԿՑԱՇՈՐՔ Փ108	ԽԱՍԻ	2	
16	ՊՈՐՊԱՏԵ ԿՑԱՇՈՐՔ Փ50	ԽԱՍԻ	4	

ՏԼՈՐԵՆ	ՅՈՂԱՐՑԱՆ		ՊԻ ԼՈՐՈՒ ՄԱՐԴԻ ՊՐԱԿԱՏԱՐԱԿ ԽԱՄԱՆԻ ՀԱՏԱՐԱՐ ԲՆԱԿԱՆԱԳՐԻ ՎԱՐԿԱՆԱՆ ՄԱՐԱԴՐՈՒՄ ԶՐԱԳԻ ԿԱՌԱՐՈՒՄ ԱՂԽԱՄԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻՐ		
ՀԾԵՑ	ԱՄԱՌՈՒՆ		ՁԵՐԱՄԱՍԿԱՐԱԿՐՈՒՄ	ՓՈՒԼ	ՁԵՐԻՑ
ԱՑՈՒԳԵՑ	ԱՄԱՌՈՒՆ			Ա Ն	Ց - 19
			Հասցեով, իսկ ու չոր հորերի կառուցման և ջրառանձնի ճանաչման անհրաժեշտ, իսկ ու չոր հորերի ճանաչման և վնասվածքի համալրում	ԲՈՒՆԱՍԱԳԻՐԻ ՄԱՐԴ	


ՍԱՌԻՉ ՀՈՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ԿՏՐԱՎՈՐ 1-1




ԿՏՐԱՎՈՐ 2-2



ՍԱՌԻՉ ՀՈՐԻ ԱՇԽԱՏԱՆԱԲԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՍԹՈՓԱԳԻՐ

Գ/Բ	ԱՆՎԱՆՈՐԸ	ՆՇԱՆԱԿՈՒՄ	ԵՐԿԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ	ՔԱՆՈՒՄ
ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀՈՐԻ ԶՈՐԳ - 1					
1	Մետաղական խողովակ	Փ 1000x8.0	1600	1	318.44
2	Մետաղական խողովակ	Փ 80 x 4	300	3	7.55
3	Մետաղական թել	- 1000 x 5	800	1	31.4
4	Մետաղական թել	- 800 x 5	200	1	6.28
5	Մետաղական անկյունակ	L 50x5	100	4	0.4
6	Ծեփ	Փ 30	150	2	1.7
7	Պողպատաթել	- 50 x 5	10	4	0.01
8	Պողպատաթել	- 150 x 5	70	1	0.4
9	Մետաղական անկյունակ	L 50x5	70	1	0.30
10	Անիակ	Փ 16 A-1	600	5	0.95
11	Մետաղական թել ինքնակաշարժական մետաղական - Փ 1000		1600	1	5.02 Գ
12	Կաշիկի վազկան				1
13	Մետաղական թել	- 1000 x 10	1200	1	94.2
14	Ուժեղացված խողովակ				2
	Փ 50 ԿՆՏՆՈՐԻՑԻ ՑԵՆՏՐԱԿԱՆ (պողպատե) համար				2
	ՊԵՆԻՆԵ-ԼԵՆԻՆԻ ԵՎ ՏՈ ՆԱԽԱՆԱԾՈՐԻՑԻ ՏԵՄԻՆԱՐԻՍ				2
	Սաղմի խողովակի ծանցիկ ծառի թուղթ - 515 ծանցիկ				5.02 Գ
	Հորի միջին զանգվածային խտությունը 8 7.5				0.29 Գ
	Բնակիչի անվտանգ խնայող դիտարկող միջին արագ				1.70 Գ

ԴՈՒՆԻՑԻՆԵՆ / ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ



ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		
ՏԼՈՒՄԵՆ	ՔՈՇԱՐԱՆ	ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ		

**Անհրաժեշտ հիմնական
շին. մեքենաներ, մեխանիզմներ եվ
սարքավորումներ**

ԴԻՐՔ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ
1	Գազաեռակցող ագրեգատ	1 հատ
2	Էլեկտրաեռակցող ագրեգատ	1 հատ
3	Ավտոբետոնախառնիչ	1 հատ
4	Ինքնաթափ ավտոմեքենա	2 հատ
5	Էքսկավատոր	1 հատ
6	Ջրի մեքենա	1 հատ
7	Տոփանիչ	1 հատ
8	Պոլիէթիլեն խողովակների մոնտաժման սարք	1 հատ

**- Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման
վերաբերյալ**

Կազմակերպչա-տեխնոլոգիական սխեմաներ բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտներն ու նախագծի տեխնիկական պայմանները: օբյեկտի շինարարությունը ըստ ՇՈՒՍ 3.01.01-85-ի (շինարարության կազմակերպման)


1. Նախապատրաստական փուլ
2. Հողային աշխատանքներ իրականացում
3. Հիմնական փուլ

1. Նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները
.. գեոդեզիական նշահարում

Շինարարության կենսապահովման ցանցերի տեղադրման աշխատանքները իրականացնել համաձայն շահագործող կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանների: Շինհրապարակը համալրվում է հակահրդեհային սարքավորումներով, լուսարձակներով: Շինարարական աշխատանքները իրականացնել կապալառուի կողմից աշխատանքների կատարման նախագիծը կազմելուց հետո, որտեղ ըստ ՇՈՒՍ 111-4-80-ի պահանջների պետք է նշվեն անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման ցուցմունքները նշված պայմաններում աշխատելու ժամանակ:

Հողային եվ հիմքերի պատրաստման աշխատանքներ հողային և հիմքերի պատրաստման աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային նախագծի և ՇՈՒՍ 111-4-80 «հողային

շինվածքներ եվ հիմքեր»-ի:



- Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ

ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է մեքենայացման բազայում:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս Գյուլագարակ քաղաքում գործող լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Կենցաղային և շին աղբը ժամանակավոր յուրաքանչյուր օր նախատեսվում է կուտակել տարածքի արևելյան հատվածում և պարբերաբար հեռացնել Գյուլագարակ համայնքի կողմից հատկացված վայր, իսկ հողաբուսաշերտը տեղադրել անմիջապես ջրագծի հարակից տարածքում և յուրաքանչյուր ավարտված տարածքում հետլիցք իրականացնել:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տեղանքը լեռնոտ է՝ Բազումի լեռնաշղթայի ստորոտում գտնվելու պատճառով:

Բազումի լեռնաշղթան պատկանում է Փոքր Կովկասի Վիրահայոց-Ուրաբադի լեռնահամակարգի (միաթեք աստիճանաձև բեկորային զոնա) ներքին լեռնաշղթաների թվին և 66կմ երկարությամբ ձգվում է Սեպասարի սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթան ունի 2800մ միջին, 2992մ (Ուրասար) առավելագույն բարձրություն:

Բազումի հորստ-կամարածալքը համապատասխանում է երկրաբանական կառուցվածքին, դրան բնորոշ են համաչափ ուռուցիկ աստիճանաձև լանջեր: Տարածքի կառուցվածքային ռելիեֆին բնորոշ են երկրորդական կարգի կամարածալքային (Ուրասարի, Չքնաղի), գմբեթաձև (Մայմեխի), գոգածալքային կամ ճկվածքային (Գարգառի), գրաբեն-գոգածալքային (Դիլիջանի) կառուցվածքներ:

Տեղամասը հիմնականում բաղկացած է հրաբխածին, ենթահրաբխածին նստվածքային առաջացումներից ներկայացված պորֆիրիտների, տուֆաբրիկչաներով և նրանց տուֆերով: Հանքարփակող ապարները հիմնականում ներկայացված են հիդրոթերմալ փոփոխված

ապարներով՝ քվարց-սերիցիտներով՝ քվարց-սերիցիտ քրոմային մետասոմատիտներով և երկրորդական քվարցիտներով:

Տեկտոնական տեսակետից շրջանն ունի բավական բարդ երկրաբանական կառուցվածք, որը պայմանավորված է դրա տեղադիրքով Փոքր Կովկասի մեզանտիկլինորիումի Սևան-Ամասիայի տեկտոնական գոտու հյուսիս-արևմտյան մասում՝ Կապան-Գոգարանի կիմերեյան ծալքավորության զոնայում:

Սևան-Ամասիայի տեկտոնական գոտին բնութագրվում է ինտենսիվ, որոշ տեղերում հավասարաթեք և հովհարաձև ծալքավորությամբ՝ բարդացված վերնետվածքներով և վարնետվածքներով:

Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ, առավելագույն հորիզոնական արագացումները 0,3g:

Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀԾՆ II-20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ համաձայն՝ ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգավոր գոտիավորման քարտեզի, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ: աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր «կառույցներով»:

Ռելիեֆը

Գյուլագարակի տարածաշրջանի ռելիեֆը չափավոր զառիթափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով: Դիտվում է թույլ գծային էրոզիա: Մակերևութային գերակշռող թեքությունները՝ 20 – 30

- ԿԼԻՄԱՆ

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011

«Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և ներկայացվել է Ստեփանավան քաղաքի համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Հայաստանի տարածքն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների մեծ բազմազանությամբ: Համաձայն Հայաստանի ագրոկլիմայական տեղեկագրի՝ Ստեփանավանի անտառտնտեսության տարածքը հիմնականում վերագրվում է 7-րդ ագրոկլիմայական գոտուն՝ չափավոր ցուրտ, ԾՄԲ 900մ-ից բարձր: Անտառի տարածման վերին գոտում կլիմայական պայմանները համեմատաբար խիստ են:

Ստեփանավանի անտառտնտեսությունում կլիմայական պայմանները խիստ տարբերվում են՝ կախած ծովի մակարդակից ունեցած բարձրությունից և տարբեր դիրքադրությունների վրա անտառների տեղաբաշխումից:

Տարածաշրջանն առանձնանում է բարեխառն կլիմայով՝ զով, խոնավ ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով: Մինչև 1300-1400 մետր բացարձակ բարձրությունների վրա կլիման չափավոր տաք է, 1600–1700մ բարձրությունների վրա չափավոր ցուրտ, իսկ մինչև 2100մ բարձրություններում գերիշխում է ցուրտ կլիմայական գոտին:

Առավելագույն դրական և բացասական ջերմաստիճանները դիտվում է հուլիս-օգոստոս ամիսներին՝ +32°, դեկտեմբերին -16°: Գերիշխում են հյուսիսային և հյուսիս-արևմտյան քամիները: Ընդհանուր առմամբ, Ստեփանավանի անտառտնտեսության տարածքում կլիմայական պայմանները բարենպաստ են ասեղնատերևավոր և լայնատերևավոր շատ տեսակների անտառաճման համար:

Կլիմայական բարենպաստ պայմանները հնարավորություն են ընձեռնել տարածաշրջանում ստեղծելու առողջարանային և հանգստի լայն ցանց:

Կլիմայական բնութագրերը ըստ Ստեփանավանի օդերևութաբանական կայանի տվյալների

⊕ Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անունը	Բարձրություն մետրերով	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ստեփանավան	1397	-3,6	-2,8	0,6	6,7	11,3	14,2	17,1	16,8	13,3	8,2	3,1	-1,8	6,9	-31	37

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանականկայանիանվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջինտարեկան,%	Միջին ամսական ժամը 15-ին ամենացուրտ ամսվա %	ամենաշոգամսվա, %
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ստեփանավան	67	69	71	70	76	78	76	76	75	76	72	69	73	56	58

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անունը	միջին ամսական Տեղումների քանակը, մմ													Ձնածածկույթ		
	որական առավելագույն ըստ ամիսների												Սառնակայանի տարածությունը, մմ	Սառնակայանի տարածությունը, մմ	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ստեփանավան	20	31	39	69	119	125	75	57	49	46	36	22	688	63	73	147
	36	54	29	36	103	55	53	51	41	36	32	35	103			
Վայք	25	28	36	57	63	45	23	21	15	36	31	31	411	65	51	
	22	20	23	36	30	32	34	39	23	29	37	27	39			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհողմու- թյունների կրկնելիո- ւթյունը, %	Միջին ամսական արագու- թյունը, մ/վ	Միջին տարեկան արագու- թյունը, մ/վ	Ուժեղ քամի- ների (≥15մ/վ)օրե- րի քանակը	Հաշվա- ր- կային արագու- թյունը, մ/վ, որը հնա- րավոր է մեկ անգամ «ո» տարի- ների ընթաց- քում		
			Հյուսիս - սային (Հս)	Հյուսիս- Արե- վելյան (ՀսԱրլ)	Արե- վելյա ն (Արլ)	Հարա վ- Արե- վելյան (ՀվԱրլ)	Հարա վ (Հվ)	Հարա վ- Արե- մտյան (ՀվԱրմ)	Արե- մտյա ն (Արմ)	Հյուսիս- Արե- մտյան (ՀսԱրմ)					2 0 0	5 0 0	10 0 0
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	1 6 7	1 7	18
Ստեփանավան	861,0	հունվար	2	3	8	7	7	37	30	6	49	2,8	1,8	21	2 7	3 0	32
			2,0	1,3	1,5	2,0	3,0	3,9	2,8	2,2							
		ապրիլ	2	3	11	10	6	25	34	9	45	2,0					
			2,2	1,4	1,6	1,9	2,2	3,1	2,6	2,2							
		հուլիս	2	3	13	10	4	19	39	10	61	1,1					
			1,5	1,1	1,4	1,4	1,4	1,6	1,8	1,5							
		հոկտեմբե- ր	2	3	12	10	5	24	37	7	59	1,3					
			1.7	1.3	1.4	1.4	1.6	2.2	2.2	2.0							

Անտառներ

Տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (Fagus

orientalis), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառեչ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Սրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տխլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սգնու տարբեր տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսահայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառեչ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (դաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Աբեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ զարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրաճ (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

«Դիլիջան» ազգային պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական

